# Խորհրդային Հայաստանի Լուսժողկոմատ

## ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՊԱԼԱՏ

*Խորհ. Հայաստանի Պետական Գրապալատը այն օրգանն է, որ կատարում է Խորհ. Հայաստանի սահմաններում տպագրուած բոլոր հրատարակութիւնների (գրքերի, բրոշիւրների, պարբերականների, թերթերի, եւն.) բիբլիոգրաֆիկ մշակումը:*

*Խորհ. Հայաստանի Պետական Գրապալատը միաժամանակ զբաղւում է միջազգային հրատարակութիւնների փոխանակութեամբ, եւ այդ ճանապարհով աշխատում է ճոխացնել Խ. Հայաստանի գրադարանները օտար գրականութեամբ, ապահովել գիտական, մասնագիտական եւ լուսաւորութեան ֆրոնտի աշխատակիցների հայերէն եւ օտար գրականութեան պահանջները:*

*Խ. Հայաստանի Պետ. Գրապալատը իր տրամադրութեան տակ ունի հայերէն եւ ռուսերէն հին եւ նոր հրատարակութիւնների ճոխ մթերք, որը կազմում է փոխանակութեան ֆոնդը: Մասնաւորապէս ուշագրաւ է հայագիտական գրականութիւնը (էմինեան ազգագրական ժողովածու, Հայոց Պատմութեան, Ղուկասեան մատենադարանի հրատարակութիւններ, եւն.):*

*Խորհ. Հայաստանի Պետ. Գրապալատը ուղարկում է նաեւ Խ. Հայաստանում եւ Միութեան սահմաններում լոյս տեսած բոլոր հրատարակութիւնները:*

*Խ. Հ. Գրապալատը խնդրում է բոլոր հայ հեղինակներից, գրավաճառներից եւ գրատէրներից իրենց հրատարակութիւններից երկուական օրինակ ուղարկել Գրապալատին, ամբողջացնելու համար գաղութահայ գրականութիւնը: Ուղարկուած բոլոր գրքերի փոխարէն պահանջեցէք համապատասխան արժէքով գրականութիւն:*

*Գաղութահայ գրական եւ լուսաւորութեան աշխատակիցները իրենց գտնուած քաղաքների պետական գրադարաններից թող պահանջեն գրականութիւն եւ նրանց մէջ, մասնաւորապէս օտար արեւելագիտական հաստատութիւններին ու գրադարաններին, կապ պահպանելու մեզ հետ եւ պահանջելու մեր հայագիտական եւ ընթացիկ գրականութիւնը:*

*Պահանջեցէք Գրապալատի օրգան «Տպագրութեան տարեգիրը», որը ցոյց է տալիս ամբողջ տարում Խ. Հայաստանում լոյս տեսած գրքերը, թերթերը, ժուռնալները եւ յօդուածները:*

*Ամէն գրութիւն եւ ծանրոց ուղղել հետեւեալ հասցէով.*

Խորհ. Հայաստանի Պետական Գրապալատ, Կուլտուրայի Տուն, Երեւան

*Bibliothéque d'Etat, Maison de la Culture, rue Abovian, Erivan, Arménie*

*(U. R. S. S.)*

digitised by A.R.A.R.@